

**ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԴ  
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր – թվային համաձայնություն, իմաստային համաձայնություն, բազմակիություն, բարդ նախադասություն, հարաբերյալ, հարաբերական դերանուն, երկրորդական նախադասության կապակցում*

Համաձայնությունը՝ որպես կապակցման եղանակ, գործում է ոչ միայն պարզ նախադասության որոշ միավորների, այլև բարդ ստորադասական նախադասության որոշ բաղադրիչների կապակցման դեպքում: Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում հանդես են գալիս թվային և ժամանակային համաձայնություններ, որոնցից այստեղ կանդրադառնանք առաջինին: Բարդ նախադասության բաղադրիչների միջև թվային համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում: Թվային համաձայնություն դրսևորող եզրերից մեկը լինում է հարաբերական դերանուն, իսկ մյուսը կարող է արտահայտվել գոյականներով, դերանուններով (հարաբերյալներով), փոխանվանական կամ ինքնանվանողական գործառնությամբ կիրառված բառերով: Թվային համաձայնությունը կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ կապակցական գործառնությամբ կատարող բառերից առնվազն մեկին բնորոշ է թվի քերականական կարգը: Երկու եզրերի միջև հնարավոր է թվային համաձայնության երեք դրսևորում՝ *ձևաբանական թվով-ձևաբանական թվով, իմաստային թվով-ձևաբանական թվով, բազմակիությամբ-ձևաբանական թվով*: Առաջին դեպքում կապակցվող եզրերը դրվում են ձևաբանական միևնույն թվով, երկրորդ դեպքում դրանցից մեկը իմաստով է հոգնակի կամ եզակի (օրինակ՝ *մեկը, բոլորը*), իսկ մյուսը՝ ձևաբանորեն է եզակի կամ հոգնակի, երրորդ դեպքում որպես կապակցման մի եզր հանդես են գալիս բազմակի միավորներ, իսկ մյուս եզրը լինում է ձևաբանորեն հոգնակի բառ: Պետք է նշել, որ հարաբերյալը կարող է զեղչված լինել և, ինչպես հին հեղինակներն են ասում, հասկացվել «գործությամբ»: Այս ընդհանուր սկզբունքները բնորոշ են թե՛ գրաբարին, թե՛ միջին հայերենին, թե՛ աշխարհաբարի երկու տարբերակներին՝ արևելահայերենին ու արևմտահայերենին, սակայն դրանց միջև անշուշտ կան որոշ տարբերություններ:

Գրաբարում բարդ նախադասությունների կապակցման գործընթացում թվային համաձայնությունը առաջին հերթին դրսևորվում է *որ* դերանունով կապակցվելու դեպքում: Օրինակ՝ *Եթե աղբերքն մշտաբուղիսք, որք ի նորա*

հրամանէ կարգեցան, հանապազ բոլորն և ոչ պակասն, որոց բոլորնքն զայլոց կարօտութիւնս լնուն, և ինքեանք ի նմին յորդութեան կան մշտնջենաւորք, ո՞րչափ ևս առաւել այն՝ որ նոցա զյորդութիւն բոլորնսն յօրնեաց, որ աղբիւր է բարութեան. որ զամենայն յոր արար գեղեցիկս արար, այս ինքն զբանաւորս և զանբանաւորս, զմտաւորս և զանմտաւորս, զխօսունս և զանխօսունս, զասունս և զանասունս (Եզնիկ)<sup>1</sup>: Մ. Չամչյանը, որին Գ. Ջահուկյանը անվանում է «Առաջին հեղինակը, որ գրաբարի քերականությունը վերջնականապէս ազատեց հունարանության և լատինաբանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները»<sup>2</sup>, իր «Քերականութիւն հայկազեան լեզուի»<sup>3</sup> աշխատության մեջ քննում է համաձայնությանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց թվում նաև բարդ նախադասության մեջ հանդես եկող համաձայնական կապը: Նախորդ հեղինակների նման նա ևս «համաձայնություն» տերմինը գործածում է երկու իմաստով՝ շարահյուսություն և շարահյուսական կապակցման եղանակներից մեկը, թեև նա շարահյուսությունն ըմբռնում է ավելի նեղ իմաստով: Համաձայնությունը որպէս կապակցման եղանակ քննելիս Մ. Չամչյանն առանձնացնում է խոսքի մասերի կապակցման ութ տեսակ, որոնց մեջ դերանունների երկու տեսակի կապակցություն է նշում՝ մեկ այլ դերանվան հետ և անվան հետ: Ահա դերանունների կապակցությունը քննելիս էլ անդրադառնում է բարդ նախադասությունների բաղադրիչները կապակցող որ դերանվան կիրառություններին: «Յաղագս համաձայնութե՛ յարաբերական դերանուանս՝ Որ» վերնագրված ԺԴ գլխի հենց սկզբում Մ. Չամչյանը նշում է, որ հարաբերական որ դերանունը գործածվում է, «որպէս զի մի՛ կրկնեսցի մի և նոյն բառ»<sup>4</sup>, ապա առանձին-առանձին քննում, թե որ դեպքում է որ-ը թվով համաձայնում գերադաս նախադասության այն բառին, որին բուն իմաստով կապակցվում է երկրորդականը: Այսինքն՝ Մ. Չամչյանը որ-ի համաձայնությունը համարում է գերադաս նախադասության մեջ եղած բառին փոխարինելու հետևանք: Մինչդեռ գրաբարի քերականության մեկ այլ գիտակ՝ Ստ. Մալխասյանցը, համաձայնության պատճառը համարում է որ հարաբերականի կապակցական գործառույթը: Գրաբարի բարդ նախադասությունները քննելիս նա նշում է. «Յարաբերական դերանունը կրկնակի կապ ունի, մի կողմից գլխաւոր նախադասու-

<sup>1</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (թարգմ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի), Երևան, 1994, էջ 8:

<sup>2</sup> Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303:

<sup>3</sup> Տե՛ս Քերականութիւն հայկազեան լեզուի, յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութեան՝ ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց Կոստանդինուպոլսեցոյ՝ յաշակերտէ ամենապատիւ տեառն Մխիթարայ Մեծի Աբբայի, Վենետիկ, 1779:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 382:

թեան այն բառին հետ, որին որոշում է (յարաբերեալ) և միւս կողմից երկրորդական նախադասութեան հետ, որի անդամն է կազմում: Այս պատճառով նա պէտք է համաձայնի թէ՛ յարաբերեալին հետ և թէ՛ երկրորդական նախադասութեան հետ»<sup>1</sup>: Այս կարծիքին է նաև Ստ. Պալասանյանը: Նա գրում է. «Որ յարաբերականը գլխաւոր նախադասութեան այն գոյականի հետ է համաձայնում թո՛ւով, որին երկրորդական նախադասութիւնը յարաբերում է, իսկ հոլովով համաձայնում է երկրորդական նախադասութեան բային նայելով»<sup>2</sup>: Թեև այս ընդհանուր մոտեցման հարցում լեզվաբանների կարծիքները տարբեր են, սակայն բուն խնդիրը, որը բխում է լեզվական փաստերից, թէ՛ նշված, թէ՛ այլ հեղինակները մոտավորապէս նույն ձևով են ներկայացնում: Ընդհանուր սկզբունքն այն է, որ եզակի թվով բառերին կապակցվելու դեպքում *որ* հարաբերականը դրվում է եզակի թվով, իսկ հոգնակի թվով բառերին կապակցվելու դեպքում՝ հոգնակի թվով: Հաճախ դերանունով արտահայտված հարաբերյալը կարող է գեղջված լինել և հասկացվել իմաստից: Սակայն այս ընդհանուր սկզբունքից շեղումներ հաճախ են պատահում: Ինչպէս *որ* հարաբերականի մասին խոսելիս նշում է Ստ. Պալասանյանը. «Բայց շատ անգամ յոգնականի տեղ եզակի է մնում, մանաւանդ նախորդի հոլովներում, նոյնպէս եթէ յարաբերեալը անեզակյան գոյական է: *Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք: Սոքա են՝ որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն: Կատարեաց զամենայն զգործս իւր զոր արար*»<sup>3</sup>: Գրաբար բնագրերում անհամաձայնութիւններ հաճախ են հանդիպում: *Որ* հարաբերականը հատկապէս անհամաձայն է մնում, երբ ուղղական հոլովով է: Այս իրողությունը բնորոշ է նաև ժամանակակից հայերենին: Ստ. Մալխասյանցը համարում է, որ դա հեղինակների սուբյեկտիվ վերաբերմունքի հետևանք է: «Ինչպէս երևում է,- գրում է նա,- այսպիսի դեպքերում յարաբերականն եզակի կամ յոգնակի դնելը կախուած է եղել մատենագիրների ճաշակից և կամքից: Նախնականն ու կանոնաւորն եղել է յոգնակին, բայց սովորականը՝ եզակին»<sup>4</sup>:

Միջին հայերենում էլ ընդհանուր առմամբ կա գրաբարից եկող սկզբունքը, այսինքն՝ հարաբերականի և այն բառի համաձայնությունը, որին կապակցվում է երկրորդականը, սակայն շատ մեծաթիվ են նաև շեղումները, օրինակ՝ *Չոր յառաջ կամ յետև սուրբքնն հաւասար, որք թողին զմեծութիւն ու զաշխարհի սէր* (Ֆրիկ)<sup>5</sup> : *Գեւ չի մընաց աղբիւր ու գետ, Որ լացուցա ծքրս*

<sup>1</sup> **Մալխասեանց Ստ.**, Գրաբարի համաձայնութիւնը, Յովհ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1892, էջ 121:

<sup>2</sup> **Պալասանեան Ստ.**, Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հատոր երկրորդ, Համաձայնութիւն, Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկերութեան տպարան, Թիֆլիզ, 1869, էջ 79:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>4</sup> **Մալխասեանց Ստ.**, նշվ. աշխ., էջ 136:

<sup>5</sup> **Ֆրիկ**, Տաղեր (առաջաբանը, բնագրի պատրաստումը, հավելվածը Ա. Ղանալանյանի), Երևան, 1982, էջ 19:

չի խմեցին (Ֆրիկ, էջ 75): *Ես աղաչեմ զամենեսեան, ով զիմ ողբանքսս լըսենայ* (Ֆրիկ, էջ 32): *Գիտեմ՝ կային հանցեղ մարդիկք, Որ ի մեր չարքն խընդային* (Ֆրիկ, էջ 76): Միջին հայերենում *որ*-ի անհամաձայնությունը այնքան տարածված է, որ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքի հեղինակները համարում են, որ *որ*-ը շատ դեպքերում շաղկապի է վերածվել: Որոշիչ երկրորդական նախադասությունների քննության ժամանակ նշվում է հետևյալը. «...միջին հայերենի վաղ շրջանում նկատվող *որ* հարաբերականի՝ շաղկապի վերափոխվելու միտումն այդ լեզվի հետագա շրջանի համար օրինաչափ է դառնում: ...միջին հայերենում *որ* հարաբերականը՝ կիրառվելով իբրև որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցելու միջոց, մեծ մասամբ գործածվում է միայն եզակի, այսինքն՝ թվով չի համաձայնում իր հարաբերյալին և այն ստորոգյալին, որը պարունակող նախադասության մեջ ինքը հանդես է գալիս»<sup>1</sup>: Միջին հայերենում տարածվում է նաև *որ*-ի՝ անհրաժեշտ հոլովով էլ չդրվելու դեռևս գրաբարում նկատվող միտումը: Այս ամենով հանդերձ՝ *որ*-ի՝ թվային համաձայնությունը միջին հայերենում այնուամենայնիվ լիովին չի վերանում:

Ժամանակակից արևելահայերենում բարդ նախադասության կապակցության մեջ թվային համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում, եթե որպես կապակցման բառական միջոց երկրորդական նախադասության մեջ հանդես են գալիս *որ, ով, ինչ, ինչպիսի, որպիսի* դերանունները: Այդ գործառույթում հարաբերական դերանունները կապակցման երկու եզր ունեն: Սակայն գլխավորի կազմում հարաբերյալ կարող է նաև չլինել: Ընդունված է համարել, որ այդ դեպքում համաձայնական կապ է գործում հարաբերական դերանվան և գլխավորի ստորոգյալի միջև: Ն. Պառնասյանը ենթակա երկրորդականները կապակցող *ով* դերանվան վերաբերյալ հետևյալն է գրում. «*Ով* հարաբերականը, որպես գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցելու միջոց, իր թվով համաձայնում է հարաբերյալի հետ, իսկ հարաբերյալի բացակայության դեպքում՝ գլխավոր նախադասության ստորոգյալի հետ»<sup>2</sup>: Ստատավորապես նույն ձևակերպումն է կատարում Գ. Գարեգինյանը: Նա ենթակա երկրորդականները քննելիս *ով* դերանվան առնչությամբ գրում է. «*Ով* դերանունը թվով համաձայնում է գլխավորի հարաբերյալի, իսկ նրա բացակայության դեպքում՝ *ստորոգյալի հետ*»<sup>3</sup>: Մենք հավելենք, որ երևույթը նույնն է նաև ստորոգելի, գոյականական անդամի լրացում, ինչպես նաև խնդիր երկ-

<sup>1</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 199-200:

<sup>2</sup> Պառնասյան Ն., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961, էջ 30:

<sup>3</sup> Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1991, էջ 145:

բորդականների և վերը նշված մյուս (*որ, ինչ, ինչպիսի, որպիսի*) հարաբերականներով կապակցվելու դեպքում, սակայն կարելի է ասել, որ համաձայնությունը այս դեպքում իմաստային առումով առնչվում է նաև ենթադրյալ հարաբերյալին, որի առկայության դեպքում համաձայնական կապ պետք է լիներ նրա և ստորոգյալի միջև: Սա կարելի է համեմատել նաև զեղչված ենթակայով նախադասության հետ, որտեղ ստորոգյալն ունենում է ենթադրյալ ենթակայի թիվը: Հավելենք նաև մի կարևոր իրողություն, որը ուշադրության չի արժանանում: Համաձայնական կապը ոչ միշտ է գործում հարաբերականի և հարաբերյալի միջև: Որոշ դեպքերում համաձայնական կապը լինում է ոչ թե հարաբերականի և այն բառի միջև, որին լրացնում է երկրորդականը, այլ այդ բառի լրացման ու հարաբերականի միջև: Դրանց կանդրադառնանք քիչ ուշ:

Եզակի կամ հոգնակի թվով դրվելուց բացի՝ կապակցող հարաբերական դերանունները կարող են դրվել տարբեր հոլովներով, սակայն դա հոլովի կարգով համաձայնությունն չէ, քանի որ թվային համաձայնությունը գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման գործառնությի արդյունք է, իսկ հարաբերական դերանվան հոլովը՝ հարաբերական դերանվան կատարած պաշտոնի: Թեև հնարավոր են հոլովի կարգով համընկնումներ, սակայն դա համաձայնության հետևանք չէ: Օրինակ՝ *Եկան այն մարդիկ, որոնք կառուցել էին կամուրջը* նախադասության մեջ *մարդիկ* և *որոնք* բառաձևերի հոգնակի թիվը համաձայնության հետևանք է, իսկ ուղղական հոլովով դրված լինելն այն բանի հետևանք է, որ երկուսն էլ կատարում են ենթակայի պաշտոն: Դա ապացուցվում է նրանով, որ *մարդիկ* բառաձևի՝ եզակի լինելու դեպքում *որոնք*-ը նույնպես եզակի կդրվի՝ *Եկավ այն մարդը, որը կառուցել էր կամուրջը*: Մինչդեռ *մարդիկ* բառաձևը ուղղական հոլովով թողնելով՝ *որոնք*-ի հոլովը կարող ենք փոփոխել, եթե երկրորդականի մեջ *որոնք*-ը գործածենք մեկ այլ այնպիսի պաշտոնով, որում պետք է դրվի ուրիշ հոլովով, ինչպես՝ *Եկան այն մարդիկ, որոնցով հպարտանում էին բոլորը*: Ինչպես տեսնում ենք, թվային համաձայնությունը պահպանվում է, իսկ հոլովականը՝ ոչ:

Ինչպես նշվել է, կապակցվող եզրերի միջև հնարավոր է թվային համաձայնության երեք ձև: Տարբեր պատճառներով հնարավոր են նաև անհամաձայնության դեպքեր, որոնց կանդրադառնանք համաձայնությունը քննելուց հետո:

*Քերականական թվով-քերականական թվով* համաձայնության դեպքում կապակցվող եզրերը դրվում են քերականական նույն թվով՝ երկուսն էլ եզակի կամ երկուսն էլ հոգնակի: Օրինակ՝ *Նա բերել էր այն գրքերը, որոնք պետք է կարդայինք*: Եկել էին *նրանք, ովքեր* մեզ օգնել էին աշխատանքի ժամանակ: *Նա պիտի լսեր այնպիսի բաներ, ինչքան չէր լսել դեռ ոչ մի անգամ*: *Մեզ անհրաժեշտ են այնպիսի մասնագետներ, ինչպիսիք* նրանք են: *Նա տեսավ այնպիսի բաներ, որպիսիք* ամբողջ կյանքում չէր տեսել: Կային նաև

**այնպիսիները, որոնք** բերել էին իրենց աշխատանքները: Հաղթողները **նրանք** էին, **որոնք** երկար նախապատրաստվել էին մրցույթին: Ասացին միայն **նրանց** անունները, **որոնք** պետք է մեկնեին: **Նրանք, որոնք** պետք է կատարեին աշխատանքը, եկել էին վաղ առավոտյան: Մենք տեսանք **նրանց, որոնք** պետք է մեզ օգնեին: Երեխաները մոտեցան **նրանց, որոնք** եկել էին հարևան բակից: **Նա, ով** ավարտում էր աշխատանքը, դուրս էր գալիս:

Պետք է նշել, որ *ինչպիսի, որպիսի*, դերանունների հոգնակին տարբերվում է *որ, ով, ինչ* դերանունների հոգնակիից: Եթե *որ, ով, ինչ* դերանունները առարկայանիշ-անձնանիշ են և ունեն թվի կարգ, ապա *ինչպիսի, որպիսի* դերանունները հատկանշանիշ են, և թվի կարգը նրանց ինքնին բնորոշ չէ: Այդ կարգը դրսևորվում է փոխանվանական կիրառության հետևանքով: Մ. Ասատրյանը գրում է. «*Ինչպիսի՞ և որպիսի՞* դերանունները գոյականաբար կարող են կիրառվել հազվադեպ, այն էլ սովորաբար հոգնակի ձևով, որն ուղղականում ունենում է ՆԵԼ կամ Ք մասնիկները՝ *ինչպիսիները/որպիսիները, ինչպիսիք/որպիսիք*: Առաջին ձևերը հոլովվում են *Ի* հոլովմամբ, իսկ վերջին ձևերը չեն հոլովվում»<sup>1</sup>: Սակայն, ինչպես երևում է վերը բերված օրինակներից, անկախ թվի կարգի ձևաբանական դրսևորումների զանազանությունից շարահյուսական թվային համաձայնությունն իրականանում է նույն սկզբունքով:

*Իմաստային թվով-քերականական թվով* համաձայնությունը դրսևորվում է այն դեպքում, երբ գլխավորի մեջ գործածված բառը, որին կապվում է երկրորդականը, քերականորեն դրսևորվող թվի կարգ չունի, սակայն իմաստով արտահայտում է եզակիություն կամ հոգնակիություն: Այդպիսի բառեր են, օրինակ՝ *ոչ մեկը, բոլորը* դերանունները, որոնք չունեն իրար քերականորեն հակադրվող եզակի և հոգնակի ձևեր, սակայն իմաստով դրանցից առաջինը եզակիություն է արտահայտում, երկրորդը՝ հոգնակիություն: Դա դրսևորվում է, օրինակ, ենթակայի պաշտոնում գործածվելիս, որի դեպքում նրանց հետ գործածվում են համապատասխանաբար եզակի և հոգնակի ստորոգյալներ, ինչպես՝ *Ոչ մեկը չեկավ: Բոլորը գնացին*: Նույն ձևով էլ դրսևորվում է հարաբերական դերանունների համաձայնությունը նրանց հետ, ինչպես՝ *Թող ոչ մեկը, ով չի կարող անել դա, իզուր այնտեղ չգնա: Եկել էին բոլորը, ովքեր պետք է մասնակցեին մրցույթին*: Այսինքն՝ եզակիության իմաստ արտահայտող բառերին համաձայնությամբ կապակցվող հարաբերական դերանունները դրվում են քերականական եզակի թվով, հոգնակիության իմաստ արտահայտող բառերին համաձայնությամբ կապակցվող դերանունները՝ քերականական հոգնակի թվով: Գոյականներից իմաստով, այսինքն՝ ոչ քերականորեն հոգնակիություն են արտահայտում *-ենք, -անք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված այն բառերը, որոնք

<sup>1</sup> Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Երևան, 2002, էջ 179:

ցույց են տալիս ընտանիք, խումբ, գերդաստան, ինչպես՝ *Գևորգենք, Հակոբենք* և այլն (*Համաձայն էին միայն Հակոբենք, որոնք տեղյակ չէին վերջին իրադարձություններին*): Քերականորեն անեզական բառերը, որոնք ժամանակակից արևելահայերենում հիմնականում *-եր, -ներ* ձևայիններով կազմված տեղանուններ են (օրինակ՝ *Ալպեր, Կարպատներ*), ըստ էության չեն ընկալվում որպես հոգնակի, և նրանց համաձայնությամբ կապակցվող հարաբերական դերանունները դրվում են եզակի, օրինակ՝ *Հեռվում երևում էր միայն Ալպերը, որի գագաթները անհետանում էին մշուշում: Շամիրամի կախովի այգիները, որը համարվում է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, չի պահպանվել:*

*Իմաստային թվով-քերականական թվով* համաձայնությունը չի դրսևորվում հավաքական գոյականների և հարաբերական դերանունների կապակցման դեպքում, ինչպես՝ *Հրապարակում կանգնած էր բազմությունը, որը սպասում էր մի նոր լուրի*: Այս իրողությունը միանգամայն հասկանալի ու բացատրելի է: Հավաքականների մի մասը ունի թվի քերականական կարգ, ինչպես՝ *ժողովուրդ-ժողովուրդներ, գորք-գորքեր* և այլն, ուստի նրանց եզակի ձևերի հետ համաձայնությամբ կապակցվող միավորները դրվում են եզակի, իսկ հոգնակի ձևերի հետ՝ հոգնակի: Եվ նույնիսկ բուն հավաքականները, որոնք հոգնակի թիվ չունեն, քերականորեն գիտակցվում են որպես եզակի ձևեր: Սա ցայտուն դրսևորվում է *հավաքական գոյական ենթակա-եզակի ստորոգյալ* կապակցության դեպքում (օրինակ՝ *Ճողովուրդը սպասում էր*): Թեև բակառությամբ հնարավոր է նաև հոգնակի ստորոգյալ, բայց դա համարվում է շեղում:

Պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ թվային համաձայնությունը իրականանում է ոչ միայն հարաբերական դերանվան և այն բառի միջև, որին լրացնում ու կապակցվում է երկրորդականը, այլև այդ բառի լրացման ու հարաբերական դերանվան միջև, ինչպես՝ *Անցավ մի քանի ընթացք, որոնք ժամեր թվացին*: Այս դեպքում ևս դրսևորվում է *իմաստային թվով-քերականական թվով* համաձայնությունը, որը, սակայն, դրսևորվել է հոգնակիության իմաստ ունեցող *մի քանի* դերանվան և *որ* հարաբերականի միջև, այլ ոչ թե եզակի թվով դրված *ընթացք* գոյականի և դերանվան (իհարկե հնարավոր է նաև *ընթացքներ* ձևի կիրառումը՝ *Անցան մի քանի ընթացքներ, որոնք ժամեր թվացին*): Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ համաձայնության ընդգրկման սահմանները ավելի լայն են, քան սովորաբար ներկայացվում է:

*Բազմակիության-քերականական թվով* համաձայնությունը դրսևորվում է տարբեր կապակցություններում, ինչպես նաև բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում: Ինչպես *ենթակա-ստորոգյալ, բացահայտիչ-բացահայտյալ* կապակցությունների դեպքում բազմակիությունը իմաստային առումով համարժեք է դառնում հոգնակիությանը, այնպես էլ բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում գերադաս

նախադասության մեջ եղած բազմակի միավորների և հարաբերականի միջև դրսևորվում է հետևյալ կապը. հարաբերականը հոգնակի թվով է դրվում՝ համաձայնելով բազմակիությանը, ինչպես՝ *Եկել էին նկարիչը, քանդակագործը, ճարտարապետը, որոնք պետք է կատարեին աշխատանքը*:

Արևմտահայերենում բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում եղած համաձայնությունը հիմնական հատկանիշներով չի տարբերվում արևելահայերենում գործող օրինաչափություններից: Օրինակ՝ *Ծանոթ ձայներ էին անոնք շատ ծանոթ մարդերու, որոնք բարձրաձայն կխոսեին Մասնո բարբառով* (Ս. Սիմոնյան)<sup>1</sup>: *Անոնց աթոռներ հրավցուցին Պելավա Հակոյին երկու տղաքր, որոնք եկեր էին միասին* (Ս. Սիմոնյան, 488): *...վեճին մասնակից կնե Եպրաքսե հանրմին ձագուկները, որոնք պարզ բանվորներ են կաշմբուռն* (Շ. Շահնուր, 33): *Մեկը այն գաղափարներեն, որոնք մարդս կմղեն հանկարծական գործունեության* (Շ. Շահնուր, 41): *Այս անարգանքեն զատ շենքին կոթնցուցած էին նաև երկու հսկա գերաններ, որոնք սալաքարերեն մեկնելով՝ կնետվեին մինչև երկրորդ հարկ* (Շ. Շահնուր, 45): *Սսկե հետո պատահեցան մեկ քանին այն սովորական դեպքերուն, որոնք անխուսափելիորեն կհալածեն գաղթականները* (Շ. Շահնուր, 48): *Ինձի կյովեր թե ճամփուն երկայնքին որաներու դեզեր էին անոնք, որոնք շարժվելով, շարժվելով կառաջանային շարունակ* (Հ. Մնձուրի, 70):

Այսպիսով՝ բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման դեպքում ժամանակակից արևելահայերենում և արևմտահայերենում դրսևորվում է թվային համաձայնության երեք ենթատեսակ՝ *քերականական թվով-քերականական թվով, հմաստային թվով-քերականական թվով, բազմակիությանը-քերականական թվով*: Մա ընդհանուր օրինաչափությունն է, սակայն հնարավոր են նաև անհամաձայնության դեպքեր: Թվային անհամաձայնություն լինում է տարբեր պատճառներով:

Ինչպես նշվել է, բարդ նախադասության բաղադրիչների կապակցության ժամանակ համաձայնությունը դրսևորվում է այն դեպքում, երբ դրանք կապակցվում են *որ, ով, ինչ, ինչպիսի, որպիսի* հարաբերականներով: Սրանցից *ով* դերանունը հոգնակի ձև ունի միայն ուղղական հոլովում՝ *ովքեր*, իսկ մյուս հոլովների համար գործածվում են եզակիի հոլովաձևերը՝ *ում-ումից-ումով*: Հետևաբար այն բոլոր դեպքերում, երբ բաղադրիչ նախադասությունները կապակցվում են *ով* դերանվան թեք հոլովաձևերով, հարաբերյալի միջոցով համաձայնություն չի կարող դրսևորվել, ինչպես՝ *Նրան, ումից հեռացել էր, հանդիպեց տարիներ անց: Նրանց, ումից հեռացել էր, հանդիպեց տարիներ անց*: Բերված նախադասություններից առաջինում *նրան* և *ումից* բառաձևերը գործածվել են եզակի թվով, իսկ երկրորդում՝ *նրանց* բառաձևը՝

---

<sup>1</sup> Միյուրքահայ պատմվածք (կազմող Գ. Սևան, առաջաբանը և կենսագրականները՝ Վ. Գաբրիելյանի), հ. 1, Երևան, 1984, էջ 488: Այստեղի մյուս օրինակները ևս բերված են նույն գրքից, ուստի փակագծերում նշվում են միայն հեղինակների անունները և էջերը:



հոգնակի, իսկ *ուսից* բառաձևը՝ միակ՝ եզակի ձևով: Թվում է, թե առաջին դեպքում առկա է համաձայնությամբ կապակցում, սակայն այդ դեպքում էլ պետք է կապակցությունը անհամաձայնությամբ համարել, քանի որ գործածվել է *ուսից* միակ հնարավոր ձևը, այլ ոչ թե համաձայնության պահանջով այն դրվել է եզակի թվով: Սա զուտ քերականական պատճառով դրսևորվող անհամաձայնություն է, քանի որ առաջ է գալիս քերականական անհրաժեշտ ձևի բացակայությունից: Արևմտահայերենում *ույլ*-ը ընդհանրապես չի հոլովվում, և գործածվում են *որ*-ի ձևերը: Հետևաբար վերն ասվածները վերաբերում են միայն արևելահայերենին:

*Ույ* դերանունը երբեմն անհամաձայն է մնում նաև ուղղական հոլովով գործածված ինելու դեպքում, երբ ունի թե՛ եզակի, թե՛ հոգնակի ձևեր: *Ույ* դերանվան՝ ուղիղ ձևում անհամաձայն մնալու պատճառներից մեկը Գ. Գարեգինյանը համարում է թարգմանության ազդեցության գործոնը: Նա գրում է. «Ռուսերենի ազդեցությամբ, ուր *кто* դերանունը հոգնակի ձև չունի, և երկրորդականի ստորոգյալը այդ պատճառով գերազանցապես եզակի է դրվում, թարգմանական գրականության մեջ հանդիպում են *ույլքեր* դերանվան փոխարեն *ույ* դերանվան գործածության դեպքեր, ինչպես՝ Նա կրում էր նույն համազգեստը, ինչ *նրանք*, *ույ* պաշտպանում էր Լենինգրադը»<sup>1</sup>:

Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում թվային անհամաձայնություն ամենից շատ դրսևորվում է *որ* հարաբերականով կապակցվելու դեպքում: Դրա պատճառները մի քանիսն են: Ստ. Պալասանյանը գրաբարի վերաբերյալ նշում է. «Պատահում է որ ուղղական հոլովով *որ* յարաբերականը ամեն հոլովի տեղ է բռնում, և շատ տեղ իրանից յետոյ պետք եղած հոլովով մի դերանուն է աւելացվում. այս ձևը աշխարհաբարի մեջ էլ է երևում»<sup>2</sup>: Այսինքն՝ աշխարհաբարում առկա այս իրողությունը պատմական հիմքեր ունի: Գ. Ջահուկյանը *որ* հարաբերականով կապակցվող որոշիչ երկրորդականներում *որ* դերանվան կիրառությունները քննելիս գրում է. «...որպես երկրորդական նախադասության ենթակա հանդես գալիս այն կարող է չհամաձայնել («Այն մարդիկ, որ...»), ընդ որում հոգնակի հարաբերյալի դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը համաձայնում է ոչ թե հարաբերականի, այլ հարաբերյալի հետ, այսինքն՝ դրվում է հոգնակի թվով. հմմտ. «Այն մարդիկ, որ սովորել են շողոքորթել...»<sup>3</sup>: Սակայն պետք է նշել, որ թվային անհամաձայնություն կարող է դրսևորվել նաև այն դեպքերում, երբ *որ*-ը ենթակա չէ, ինչպես՝ *Մենք կարդացինք այն գրքերը, որ բերել էր ընկերս*: Այս նախադասության մեջ *որ*-ը ուղիղ խնդիր է, սակայն

<sup>1</sup> Գարեգինյան Գ., նշվ. աշխ., էջ 145:

<sup>2</sup> Պալասանյան Ստ., Գործնական քերականություն հայերեն լեզուի, հատոր երկրորդ, Համաձայնություն, Թիֆլիզ, 1869, էջ 80:

<sup>3</sup> Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 542:

դարձյալ անհամաձայնություն է դրսևորել: Այսինքն՝ պետք է մի փոքր հավելում կատարել Գ. Ջահուկյանի բնորոշմանը. *որ*-ը անհամաձայնություն կարող է դրսևորել, երբ գործածվում է ուղիղ՝ ուղղական-հայցականի ձևով: Մրա պատճառները պայմանավորվում են լեզվի պատմական զարգացմամբ: *Որ* հարաբերականի իմաստային և քերականական զարգացումների վերաբերյալ ուշագրավ դիտարկում է կատարում Ն. Պառնասյանը. «...երբ գրաբարյան հայցական հոլովի *զ* նախդիրը կորչում է, և անհամաձայնության ժամանակ հարաբերականը հայցական հոլովով օգտագործելու դեպքում կորցնում է նաև իրեն հատուկ հոլովական ձևը, նրա և որոշյալի կապը թուլանում է. միաժամանակ մթագնվում է նրա՝ երկրորդական նախադասության անդամ լինելու գաղափարը: Դրա հետևանքը լինում է այն, որ *որ*-ը այդ դեպքում դադարում է հարաբերական դերանուն գիտակցվելուց և վեր է ածվում շաղկապի, ծառայելով միայն որպես գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցելու ձևական միջոց: Այս երևույթը մեծ տարածում է գտնում աշխարհաբարում, որտեղ արդեն որոշ տիպի որոշիչ երկրորդական նախադասություններ միանում են գլխավորին միայն *որ* շաղկապով»<sup>1</sup>: Հիշենք, որ այս իրողությունը հատկապես ընդլայնվում է միջին հայերենում: Երևույթի նախահիմքերն ու պատճառները հիմնավոր ներկայացված են, սակայն հարցի առնչությամբ կա մի տարակարծություն. արդյո՞ք մի շարք դեպքերում *որ*-ը պետք է համարել շաղկապ: Ն. Պառնասյանը բերում է այսպիսի օրինակներ. *Դրանք հավանաբար համհարզներ էին, որ կարգադրություններ էին անում այս ու այն գործիմբի մասին*: Դրանից հետո գրում է. «Այստեղ *որ*-ը հարաբերական դերանուն չէ, այդ երևում է նրանից, որ այն իր թվով չի համաձայնում նաև երկրորդական նախադասության ստորոգյալի հետ»<sup>2</sup>: Պետք է նշենք, որ մեր կարծիքով այստեղ *որ*-ը հարաբերական դերանուն է. այն պարզապես թվով չի համաձայնել *համհարզներ* գոյականին: Իսկ ստորոգյալը այդ դեպքում համաձայնում է գլխավորում գործածված այն բառին (կամ նրա լրացմանը), որին լրացնում է երկրորդականը: Վերջինիս մասին, ինչպես տեսանք վերև արված մեջբերման մեջ, նշում է Գ. Ջահուկյանը: Խոսելով *որ* հարաբերականի անհամաձայն մնալու մասին՝ Գ. Գարեգինյանը բերում է այսպիսի օրինակ՝ *Ինձ ոչ թե սենյակն էր հետաքրքրում, այլ նրանք, որ պիտի դուրս գային*, և իրավացիորեն նշում է. «Ժամանակակից հայերենում այս երևույթը տարածված է ոչ միայն ենթակա, այլև ստորոգելիական վերադիր, հատկացուցիչ, որոշիչ, խնդիր երկրորդականների կապակցության դեպքում: Այս կառույցում ուղղական հոլովով դրված և ենթակայի պաշտոն վարող *որ* դերանունը *որ* շաղկապից տարբերվում է նրանով, որ այն կարելի է փոխարինել *որոնք* դերանվամբ: Շաղկապ

<sup>1</sup> Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 44:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 47:

համարելու դեպքում պետք է ընդունենք, որ երկրորդականը կամ *անենթակա* է, կամ էլ զեղչված ենթակայով (*նրանք*) նախադասություն: Սակայն այդ «զեղչված» ենթական ոչ մի կերպ հնարավոր չէ վերականգնել...., քանի որ *որ* բառը, դերանուն լինելով, արդեն իսկ զբաղեցրել է ենթակայի շարահյուսական դիրքը<sup>1</sup>: Կարծում ենք՝ հիմնավորումը միանգամայն ճիշտ է: Բերենք ևս մեկ փաստարկ, որ նման կիրառություններում *որ*-ը պետք է դերանուն համարել: Եթե հենց բերված օրինակները փոփոխենք այնպես, որ կարիք լինի *որ*-ը դնելու թեք հոլովներով, անմիջապես կփոխվի նաև նրա թիվը, քանի որ, ինչպես նշվել է, անհամաձայնությունը դրսևորվում է միայն ուղիղ ձևերում: Այսպես՝ *Պրանք հավանաբար համհարզներ էին, որոնցից կարգադրություններ էինք ակնկալում այս ու այն գործիմբի մասին* նախադասության մեջ *որ*-ը դրվել է հոգնակիով, այսինքն՝ առկա է թվային համաձայնություն: Ի դեպ, *որ* դերանունը ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոններում եզակի թվով հաճախ գործածում են նաև առանց հոդի, երբ հոդի կարիքը կա, ինչպես՝ *Այն մարդը, որ(ը) եկել էր*:

Այս ամենի հիման վրա կարելի է ասել, որ այն դեպքերում, երբ երկրորդական նախադասությունը կապակցվում է *որ* հարաբերականով, որը դրվում է ուղղական-հայցականի ձևով, *որ*-ը կարող է թվով անհամաձայն մնալ, թեև դա խրախուսելի ձև չէ: Այդպիսի կիրառությունները թերևս արդարացված են չափածո խոսքում, որտեղ կան տաղաչափությանն առնչվող գործոններ:

Արևմտահայերենում էլ հաճախ են հանդիպում անհամաձայնության դեպքեր, ինչպես՝ *...ամբողջ հոգիովս կատեն այդ գագանները, որ ձեզ ջարդեցին* (Շ. Շահնուր, 47): *Պատահեր, որ անձրև չգար, երաշտ ըլլար, դարձյալ հյուսիսի հովերը, որ շարունակ կփչեին, չէին թողուր, որ հասկերը կանխահասորեն չորնային, կաճեցնեին, կլեցնեին զանոնք* (Հ. Մնձուրի, 69):

*Որ* հարաբերականը անհամաձայն է մնում նաև այն դեպքում, երբ նրանով կապակցվող նախադասությունը տրամաբանական շեշտ արտահայտելու գործառույթ ունի: Շարադասությանն առնչվող հարցեր քննելիս Մ. Աբեղյանը գրում է. «Մի առանձին տեսակի շրջում կազմվում է ավելադրությամբ, որով արտահայտությունն ավելի է գորանում: Գլխավոր շեշտն ունեցող բառերը, ենթակա, խնդիր թե պարագա, դրվելով խոսքի սկզբում՝ իրանց ետևից առնում են *եմ* բայը համապատասխան դեմքով և կազմում մի ավելադրական խոսք, որի ետևից ընկնում է բուն խոսքը *որ* հարաբերականով կապված և սովորաբար կանոնավոր շարադասությամբ: Օրինակ՝ փոխանակ ասելու՝ Ես եմ համբերում, ասվում է՝ Ես եմ որ համբերում եմ»<sup>2</sup>: Ահա նման դեպքերում *որ*-ը մեծ մասամբ դրվում է եզակի թվով և պարտադիր առանց *ը* հոդի, ինչպես՝ *Այդ մարդիկ են, որ օգնել են քեզ*: Նման կառույցները Ա. Այտընյանը

<sup>1</sup> Գարեգինյան Գ., նշվ. աշխ., էջ 148:

<sup>2</sup> Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 538:

Ֆրանսերենի ազդեցության հետևանք է համարում. «Բայց գաղղիացի օտար ոճ է ատոր շատ յաճախութիւնը, մանավանդ հոլոված անուանց առջեւ. ինչպէս այս խօսքին մէջ. Ռուսիոյ *սահմաններէն է որ* այդ փախստականները հոս հասան»<sup>1</sup>:

Հնարավոր է, որ երկրորդական նախադասության մէջ կրկնվի գլխավորում եղած այն բառը, որին լրացնում է երկրորդականը: Այդ դեպքում թվային համաձայնություն լինում է կրկնվող բառերի միջև, իսկ *որ*-ը մնում է անհամաձայն, ինչպէս՝ *Նա պահարանը լցրեց այն գրքերով, որ գրքերով պետք է պարապէր*: Եթէ երկրորդականում չկրկնվեր *գրքերով* բառաձևը, ապա պետք է *որ* հարաբերականը հոգնակի թվով դրվեր՝ *Նա պահարանը լցրեց այն գրքերով, որոնցով պետք է պարապէր*:

Երբ գերադաս նախադասության մէջ գործածված բառը, որին լրացնում է երկրորդականը, ունի մեկից բարձր թվական լրացում և դրված է եզակի թվով, ապա հարաբերականը դրվում է հոգնակի թվով, ինչպէս *Եկան չորս մարդ, որոնք բերել էին անհրաժեշտ գործիքները*:

Երկրորդական նախադասությունների կապակցման դեպքում համաձայնություն չի գործում նաև այն դեպքում, երբ երկրորդականը լրացնում է գերադասի մէջ եղած կոչականին, ինչպէս՝ *Աշակերտնէ՛ր և ծնողնէ՛ր, որ նստած եք առաջին շարքում, բարձրացե՛ք երկրորդ հարկ*: Այս իրողությունը նույնն է գրաբարում, միջին հայերէնում և արևմտահայերէնում:

Հնարավոր է նաև, որ եզակի թվով բառին լրացնող երկրորդականը կապակցվի հոգնակի հարաբերյալով: Դա լինում է այն դեպքերում, երբ այդ բառը հավաքական նշանակություն ունի: Այսինքն՝ գործում է բակառություն<sup>2</sup>, օրինակ՝ *Եկել էր աշակերտների մի մասը, որոնք բերել էին իրենց աշխատանքները*:

Ինչպէս տեսնում ենք, անհամաձայնությունը դրսևորվում է տարբեր դեպքերում և տարբեր պատճառներով:

Այսպիսով՝ գրաբարում, միջին հայերէնում, արևելահայերէնում և արևմտահայերէնում բարդ նախադասության բաղադրիչների կապակցության ժամանակ հարաբերական դերանվան և հարաբերյալի կամ այն բառի միջև, որին լրացնում է երկրորդականը, գործում է թվային համաձայնություն: Այդ համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում: Հաճախ հանդիպում են անհամաձայնության դեպքեր, որոնց պատճառները տարբեր են:

---

<sup>1</sup> Այտրջյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի, Երևան, 1987, էջ 197:

<sup>2</sup> Տե՛ս Վերդյան Բ., Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970, էջ 300-301:

**Арташес Саркисян – *Согласование в числе в сложных предложениях в армянском языке***

В армянском языке при соединении компонентов сложноподчиненных предложений может проявляться согласование в числе. Оно проявляется между местоимениями, соединяющими компоненты сложноподчиненного предложения, и теми словами главного предложения, которые дополняет второстепенное предложение. Но согласование возможно и между местоимением и дополнением этого слова. Согласование в числе между компонентами сложноподчиненного предложения проявляется в древнеармянском, среднеармянском, восточно- и западноармянских языках.

**Artashes Sarkisyan – *Numerical Agreement in Composite Sentences in Armenian***

In Armenian the clauses of composite sentences may agree in number. It is mainly displayed between the connecting pronoun and the word in the main clause which is modified by the secondary clause. But the agreement is also possible between the connecting pronoun and the modifier of that word. Numerical agreement between the clauses of composite sentences is typical to Grabar, Middle Armenian, Eastern Armenian and Western Armenian.